ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Մրցույթի նպատակը՝

Երևանի քաղաքապետարանի և Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի վարչական շենքերում քաղաքացիների սպասարկման տարածքներում վճարողների պարտավորությունների դիտման, վճարների ընդունման և փոխանցման առցանց գործողություններ իրականացնելու համար համապատասխան օպերատոր ընտրելը և վճարողների պարտավորությունների դիտման, վճարների ընդունման և փոխանցման առցանց գործողություններ իրականացնելու առավել հասանելի և մատչելի պայմանների ապահովումը:

Մասնակցության պայմանները՝

1. Մրցույթին ներկայացված առաջարկների քննարկումը, գնահատումը, արդյունքների ամփոփումը և որոշման ընդունումը կատարվում է մրցույթի կազմակերպման հանձնաժողովի կանոնակարգի համաձայն.

2. Մրցույթին կարող են մասնակցել միայն իրավաբանական անձինք.

3. Մրցութային փաթեթները ընդունվում են մրցույթի հրապարակման օրվանից 10 աշխատանքային օրում.

4. Մրցութային փաթեթները ներկայացվում են մրցութային հանձնաժողովի քարտուղարին, ով ստորագրությամբ ընդունում է փաթեթը՝ մասնակցին տրամադրելով ստացական.

5. Մրցույթը բաց է և անցկացվում է մեկ փուլով:

Փաթեթների ներկայացման վերջնաժամկետ՝

1. Ոչ ուշ քան մրցույթի հրապարակային ծանուցումից 10 աշխատանքային օր հետո /2022թ.՝ սեպտեմբերի 28-ը, ժամը՝ 17.00/ հետևյալ հասցեով՝ Արգիշտի 1, հեռախոս 011-514-001, 383/: Մրցույթի արդյունքները կամփոփվեն սույն թվականի սեպտեմբերի 30-ին:

Փաթեթին ներկայացվող պահանջները՝

Յուրաքանչյուր մասնակից պետք է փակ, սոսնձված և ստորագրված ծրարում ներկայացնի համապատասխան լրացված և կնքված դիմումը և դրան կից ներկայացնի ստորագրված հայտի տարբերակը: Մրցույթային փաթեթը ներկայացվում է սույն հրապարակային ծանուցմամբ նշված օրերին: Փակ ծրարի վրա

չպետք է լինեն որևէ գրառումներ: Եթե ծրարում առկա լինի երկու հայտ, կամ հայտում նշված լինեն առաջարկված տարբերակներից երկուսը կամ ավելին, ապա տվյալ մասնակիցը համարվում է որակազրկված և իրավունք չունի շարունակել մրցույթը: Ուղարկված փաթեթի վրա չպետք է լինեն անունը /ներ/ իրավաբանական և / կամ ոչ պաշտոնական ստորագրություններ, ինչպես նաև այլ նշումներ, որոնք թույլ կտան նույնականացնել մրցույթի մասնակցին: Նույնականացման տվյալները պետք է նշվեն միայն տեղեկատվական թերթիկում: Սույն պայմանը չպահպանելու դեպքում փաթեթը չի մասնակցի մրցույթին: Յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացվել միայն մեկ մրցութային հայտ:

Կապ՝

Հարցերի համար կարող եք կապ հաստատել մրցույթի հանձնաժողովի քարտուղարի հետ, syuzanna.serobyan@yerevan.am էլ փոստով/, Հեռ. (+374 11 514 001, 383):

Այլ պայմաններ՝

Այն դեպքում, երբ մրցույթում ներկայացված հայտերի գնահատման ժամանակ մասնակիցները ստանում են հավասար միավորներ, ապա հանձնաժողովը հասավար միավորներ ստացած մասնակիցներին հրավիրում է բաց բանակցությունների, որի անցկացման վայրի և ժամի մասին մասնակիցները տեղեկացվում են նիստի ժամանակ կամ իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին համապատասխան ծանուցագիր ստանալով: Հավասար միավորներ ստացած մասնակիցներից մրցույթում հաղթող է ճանաչվում բանակցությունների արդյունքում ավելի բարձր միավորներ ստացած մասնակիցը, իսկ հավասար միավորներ ստացած որևէ մասնակցի կողմից բանակցությունների ընթացքում հաղթող չճանաչվելու դեպքում անցկացվում է նոր մրցույթ: